

ապա նուիրուած է Եղրդուտի վանքին : Գրիչը
կը խնդրէ յիշել «զատացող . . . տառիս զԹորոս
աստուածադարգ վարդապետն եւ զհոգեւոր
ծնողն իւր զԲաջ եւ զտիեզերալուր խարազ-
նագգեաց վարդապետն զՂուկաս զկա[ն]խեալն
ի բանէն Աստուծոյ» :

Յեցած այս տեղեկութեանց վրայ կարող
ենք Ղուկաս Լուսեցին նոյնացնել Հաղբատացւոյ
հետ եւ անոր գործունէութեան չրջանն ամ-
փոփել 1510—1550 տարիներու մէջ :

Ի Սոթ, Աղուանից աշխարհի մէջ, ցոյց
կու տան զերեզման մը, որ տապանադիր կը
կրէ ³¹.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ
ՂՈՒԿԱՍ ՎԱՐԳԱՊԵՏԻՆ,
ԳԱՆՁԱՍԱՐԱՅ ԱՌԱՋՆՈՐԳԻՆ
ԹՎ. Ռ (1551) :

Նո՞յն է սա Լուսեցւոյ հետ : Թերեւս Ղու-
կաս վարդապետ Հաղբատ—Սանահինէն ան-
ցած ըլլայ Աղուանից աշխարհը եւ ի Գանձա-
սար առաջնորդութիւնն ընդունած . հոս պէտք
է աշակերտած ըլլայ իրեն Յովհաննէս Ծա-
րեցի :

Ղուկաս վարդապետի գրական աշխա-
տութիւնները մեզի չեն հասած : Աճառեանի
ցուցակէն չ'իմացուիր, թէ Ղուկաս իւր օրի-
նական Քարոզգրքին մէջ գետեղած է ինքնա-
գիր քարոզներ ալ :

³¹ Սմբատեանց, Գեղարքունիք, էջ 626 :